# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2014թվականի N 20-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և "Իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքի 60-րդ հոդվածով `

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է .

1. Հաստատել ՀՀ օրենսդրությամբ Լերմոնտովո համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը՝ համաձայն հավելվածի :

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2015 թ-ի հունվարի 1-ից:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲՈԼՈՏԻՆ ԻՎԱՆ
2. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՍՏՂԻԿ
3. ՇՈՒՏՈՎ ԱԼԵՔՍԵՅ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2014թվականի N 21-Ն

## ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 Թ-Ի ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 24-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Լերմոնտովո համայնքի ավագանու 2013 թ-ի նոյեմբերի 26-ի "Լերմոնտովո համայնքի ղեկավարին կից, Լերմոնտովո համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումը, ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին" թիվ 24-Ն որոշմամբ հաստատված կարգը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲՈԼՈՏԻՆ ԻՎԱՆ
2. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՍՏՂԻԿ
3. ՇՈՒՏՈՎ ԱԼԵՔՍԵՅ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
28 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2014թվականի N 22-Ն

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 54,1-ին հոդվածով և "Իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Ստեղծել Լերմոնտովո համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման և վերահսկման) խորհուրդ հետևյալ կազմով՝

1.Գլազով Միխաիլ Միխայլովիչ համայնքի ղեկավարի տեղակալ, խորհրդի նախագահ

2.Հարությունյան Անահիտ Ֆելիքսի աշխատակազմի քարտուղար, խորհրդի քարտուղար

3.Շուտով Ալեքսեյ Պետրովիչ ավագանու անդամ, խորհրդի անդամ

4.Մկրտչյան Աստղիկ Արմենակի ավագանու անդամ, խորհրդի անդամ

5.Մակշանով Վիկտոր Պետրովիչ համայնքի բնակիչ, խորհրդի անդամ

6.Թումասյան Չինարիկ Իսակի համայնքի բնակիչ, խորհրդի անդամ

7.Բոլոտին Պյոտր Միխայլովիչ համայնքի բնակիչ, խորհրդի անդամ

8.Բելոուսովա Նինա Վասիլևնա համայնքի բնակիչ, խորհրդի անդամ

2.Խորհրդին՝ գործունեությունը իրականացնել համայնքի ավագանու 2013 թ-ի նոյեմբերի 26-ի "Լերմոնտովո համայնքի ղեկավարին կից, Լերմոնտովո համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին" թիվ 24-Ն որոշմամբ սահմանված կարգով:

3.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2013 թ-ի նոյեմբերի 26-ի "Լերմոնտովո համայնքի ղեկավարին կից խորհուրդ ստեղծելու մասին" թիվ 23-Ա որոշումը:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲՈԼՈՏԻՆ ԻՎԱՆ

2. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՍՏՂԻԿ

3. ՇՈՒՏՈՎ ԱԼԵՔՍԵՅ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2014թվականի N 23-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 10.1-րդ, 12-րդ, 16-րդ հոդվածներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Հաստատել ՀՀ լոռու մարզի Լերմոնտովո համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲՈԼՈՏԻՆ ԻՎԱՆ
2. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՍՏՂԻԿ
3. ՇՈՒՏՈՎ ԱԼԵՔՍԵՅ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2014թվականի N 24-Ն

## ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 Թ-Ի ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 24-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Լերմոնտովո համայնքի ավագանու 2013 թ-ի նոյեմբերի 26-ի "Հանրային բաց լսումների և /կամ/ քննարկումների կազմակերպման և անցկացման և դրանց վերաբերյալ Լերմոնտովո համայնքի ավագանուն տեղեկատվություն տրամադրելու կարգը հաստատելու մասին" 26-Ն որոշմամբ հաստատված կարգը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից :

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲՈԼՈՏԻՆ ԻՎԱՆ
2. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՍՏՂԻԿ
3. ՇՈՒՏՈՎ ԱԼԵՔՍԵՅ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2014թվականի N 25

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Հաստատել Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի ամենամյա գույքագրման արդյունքները, որտեղ ավելցուկ և պակասորդ չի արձանագրվել:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲՈԼՈՏԻՆ ԻՎԱՆ
2. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՍՏՂԻԿ
3. ՇՈՒՏՈՎ ԱԼԵՔՍԵՅ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2014թվականի N 26-Ն

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2015 Թ-Ի ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18 կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովո գյուղական համայնքում 2015 թ-ի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարություն՝փորձաքննություն անցկացնելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲՈԼՈՏԻՆ ԻՎԱՆ
2. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՍՏՂԻԿ
3. ՇՈՒՏՈՎ ԱԼԵՔՍԵՅ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2014թվականի N 27

### ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ , ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետերով , ՀՀ «Իրավական ակտերի մասին» օրենքի 60-րդ և 72-րդ հոդվածներով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Լերմոնտովո գյուղական համայնքի ղեկավարի վարձատրության չափը, աշխատակազմի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համափայն 1 , 2 հավելվածների :

2.Ուժը կորցրած ճանաչել Լերմոնտովո համայնքի ավագանու 2014 թ-ի հունիսի 30-ի «Լերմոնտովո համայնքի ղեկավարի վարձատրության չափը, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 12 որոշումը :

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2015 թ-ի հունվարի 1-ից :

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲՈԼՈՏԻՆ ԻՎԱՆ
2. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՍՏՂԻԿ
3. ՇՈՒՏՈՎ ԱԼԵՔՍԵՅ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

Հավելված 1
Լերմոնտովո համայնքի ավագանու
28.11.2014թ. N 27-Ա որոշման

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը ՝ 8 ։
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը ՝

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավ. | Պաշտոնային դրույքաչ. (հազար դրամ) |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 200,0 |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 155,0 |
| Աշխատակազմի քարտուղար | 1 | 153,0 |
| Աշխատակազմի առաջ.մասն.-հաշվապահ | 1 | 143,0 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | 143,0 |
| Տեխսպասարկման անձնակազմ | | |
| Բանվոր | 1 | 90,0 |
| Պահակ | 1 | 90,0 |
| Հավաքարար | 1 | 90,0 |

Համայնքի ղեկավար ՝ Է.Չախալյան

Հավելված 2
Լերմոնտովո համայնքի ավագանու
28.11.2014թ. N 27-Ա որոշման

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՏՆՕՐԵՆԻ և ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը ` 3 :
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը `

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավ. | Պաշտոնային դրույքաչ. (հազար դրամ) |
|---|---|---|
| Մշակույթի կենտրոնի տնօրեն | 1 | 70.0 |
| Մշակույթի կենտրոնի հաշվապահ | 1 | 66.2 |
| Մշակույթի կենտրոնի գրադարանավար | 1 | 66.2 |

Համայնքի ղեկավար ` Է.Զախալյան